ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի կողմից 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. 2018 թվականի հունվար ամսին ասպիրանտուրայի ընդունելության վերաբերյալ գրություններ են ուղարկվել ոստիկանության ստորաբաժանումներ, որի արդյունքում ներկայացվել են 2 հայտեր:
2. 2018 թվականի հունվար ամսին գիտբաժին է ներկայացվել տեղեկանքներ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ 2 ասպիրանտի ատենախոսության թեմաները հաստատվելու է և գիտական ղեկավարներ նշանակվելու վերաբերյալ:
3. Գիտբաժնի կողմից կազմակերպվել է Կրթահամալիրի ասպիրանտների 2017-2018 ուստարվա 2-րդ և 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակների պարտադիր և ընտրովի դասընթացների անցկացումը (կազմվել են դասընթացների դասացուցակներ, ստուգարքների և քննության գրաֆիկը, քննական և ստուգարքային տեղեկագրերը, դասընթացների մատյանը), Կրթահամալիրի 5 ասպիրանտների հետ անցկացվել է խորհրդակցություն:
4. Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրապարակված գրքերի եւ հոդվածների ցանկը կրթահամալիրի կայքի համար տրամադրվել է Միջազգային համագործակցության եւ տեխնոլոգիաների ներդրման բաժնին:
5. Գիտբաժնի կողմից նախապատրաստվել և կրթահամալիրի որակի ապահովման խմբին է ներկայացվել Գիտբաժնի կարողությունների վերաբերյալ ինքնավերլուծություն:
6. Գիտբաժինը մասնակցել է «Կրթություն XXI դար» խորագրով միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին:
7. Գիտական աշխատանքների բաժնի կողմից 2018 թվականի ընթացքում «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի 5-րդ և 6-րդ համարներում հրատարակվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի թվով 9 դասախոսների և 1 մագիստրանտի գիտական հոդվածները:
8. Գիտբաժնի պետը ընդգրկվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ 169-Ա հրամանով ստեղծված աշխատաքային խմբի մեջ, որի հիման վրա Գիտբաժինը մասնակցել է «Ոստիկանության տեղը և դերը պետական կառավարման համակարգում» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովի կազմակերպման և իրականցման աշխատանքներին:
9. Գիտբաժնի կողմից տարբեր հրատարակումների համար տրվել է 5 երաշխավորություններ:
10. «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի ՀՀ ոստիկանության 100-ամյակին նվիրված 5-րդ հոբելյանական և 6-րդ համարների հրատարակչության հետ կապված կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Հավաքվել է 27 գիտական հոդվածներ,

2. Կատարվել են սրբագրման աշխատանքները,

3. Կազմվել է ֆինանսական հաշվետվություն,

4. Ամսագրերը ներկայացվել է տպագրության,

5. Կատարվել են առաքման աշխատանքները,

6. Ամսագրերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել է կայքում:

11. Համակարգվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ամբիոնների գիտական գործունեությունը և գիտական խմբակների աշխատանքները, գիտբաժնի գիտաշխատողները մասնակցել են գիտական խմբակների բոլոր նիստերին:

12. 2018 թվականի մայիսի 15-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կայացավ «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը եվ դրա կանխարգելումը» թեմայով կլոր սեղան-քննարկում, որը կազմակերպվել էր Կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի կողմից: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի և ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

13. Հայաստանի Հանրապետության անկախության 100-ամյակին ընդառաջ 2018 թվականի մայիսի 25-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի նախաձեռնությամբ Կրթահամալիրում կազմակերպվեց «Հայոց պետականության մարտահրավերները 21-րդ դարում. արագ փոփոխվող իրականություն և պետահիրավական ռազմավարություն» խորագրով հանդիպում, ոլորտի մասնագետի հետ:

14. Գիտբաժինը մասնակցել է Կրթահամալիրում կայացած «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը» թեմայով սեմինարին:

15. 2018 թվականի հուլիս ամսին գիտբաժնի կողմից կազմակերպվել է Կրթահամալիրի ասպիրանտների տարեկան ատեստացիան:

16. Ասպիրանտների ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանները ներկայացվել է Կրթահամալիրի պետի հաստատմանը:

17. Գիտբաժնի պետի կողմից նշված ժամանակահատվածում իրականացվել է դասախոսական աշխատանքներ:

18. Կատարվել են տարեվերջյան աշխատանքների ամփոփման, հաշվետվության և հաջորդ կիսամյակի աշխատանքնային պլանների կազմման աշախատանքները:

19. Կատարվել է Ոստիկանության կրթահամալիրի կայք էջի հրատարակչությունների թարմացման աշխատանքները:

20. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 2016 թվականի փետրվարի 17-ի թիվ 69-Ա հրամանի 4-րդ կետի համաձայն Գիտական աշխատանքների բաժնի կողմից իրականացվել են Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի ամբիոնների կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփման և գնահատման աշխատանքները: Արդյունքում լավագույն ճանաչված ամբիոնին շնորհվել է շնորհակալագիր և փոխանցիկ խորհրդանիշ:

21. Գիտբաժնի կողմից իրականացվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորողների գիտական խմբակների 2017-2018 ուստարվա ընդհանուր աշխատանքների ամփոփումը:

22. Գիտբաժնի կողմից կազմվել և ներկայացվել է հաստատման ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խմբակների 2018-2019 ուստարվա ընդհանուր աշխատանքների պլանը, համակարգվել է գիտական խմբակների նոր կազմը:

23. Կրթահամալիրի ասպիրանտների հետ Գիտբաժնում անց է կացվել խորհրդակցություններ:

24. Սույն թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում գիտբաժնի կողմից կազմակերպվեց «Իրավունքի չարաշահման հիմնահարցերը» թեմայով գիտական սեմինար:

Սեմինարը վարելու համար հրավիրվել էր Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Գոռ Թորոսյանը:

Սեմինարի ընթացքում ներկայացվեց իրավունքի չարաշահման տարբեր ոլորտների առանձնահատկությունները, գործող պրակտիկան և իրավունքի չարաշահման հակազդման որոշ մեխանիզմներ:

Միջոցառմանը ներկան էին կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, թեմայով հետաքրքրվող ծառայողներ և սովորողներ, ովքեր սեմնիանարի ընթացքում հարց ու պատասխանի միջոցով էլ ավելի խորը ծանոթացան թեմայի մանրամասներին և իրականացվեց բուռն քննարկումներ:

25. Կազմակերպվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելությունը, արդյունքում ընդունվել է 1 դիմորդ, մասնավորապես.

ՀՀ ոստիկանության գիտական աշխատանքների բաժնի կողմից 2018-2019 ուստարվա հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության գործընթացում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտուրա ընդունվելու համար ՀՀ ոստիկանության մեկ ծառայողի կողմից գիտական աշխատանքների բաժին է ներկայացվել ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի թիվ 238-Ն որոշմամբ պահանջվող փաստաթղթերը:
- Պատրաստվել է ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը և վայրը, որը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից հաստատվելուց հետո ՀՀ ոստիկանության պետի գրությամբ ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարություն:
- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հայտարարությունների համար նախատեսված վայրում փակցվել է մասնագիտական քննության անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ հայտարարությունը:
- Պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանը ընդունող հանձնաժողով ստեղծելու մասին, որի կազմում ընդգրկվել են նաև գիտական աշխատանքների բաժնից՝ պետ Ա.Մնացականյանը, տեղակալ Ս.Պողոսյանը և բաժնի գիտաշխատող Մ. Խերանյանը:
- Պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանը քննական հանձնաժողով ստեղծելու մասին:

- Անցկացվել է ընդունող հանձնաժողովի նիստ, որտեղ թույլատրվել է դիմորդին մասնակցելու մասնագիտական քննությանը: Նիստի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն /03.12.2018թ. ն/փ-691/:
- Գիտական աշխատանքների բաժնի կողմից իրականացվել է մասնագիտական քննության կազմակերպման աշխատանքները:
- Պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանը դիմորդին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտուրա ընդունվելու վերաբերյալ:
- Պատրաստվել են գրություններ ՀՀ ԿԳ նախարարին, ՀՀ ոստիկանության կադրերի վարչությանը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանին:

26. Գիտբաժնի պետը մասնակցել է Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի աշխատանքներին, որի ընթացքում ներկայացրել է 2 իրավական ակտերի նախագծեր և այլ նախագծերի վերաբերյալ առաջարկություններ:

27. Գիտբաժնի անձնակազմը մասնակցել է «Ոստիկանության դերը ընտանիքում բռնության կանխարգելման գործընթացում» և «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունման 70-ամյակին ընդառաջ խորագրերով կլոր սեղան-քննարկումներին:

28. Գիտբաժնի կողմից ներկայացվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 2018 թվականի երկրորդ կիսամյակում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկանք:

29. Հաշվետու ժամանակահատվածում գիտբաժնի կողմից պատրաստվել և ուղարկվել են հասցեատերերին տարբեր իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ:

30. Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքային պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրվել է 1 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնագործնական ձեռնարկ, 1 զրուցարան և 28 գիտական հոդվածներ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի 2018 թվականի ընթացքում հիմնական կազմակերպչական միջոցառումների պլանով Գիտբաժնի համար նախատեսված միջոցառումները կատարվել ամբողջությամբ և ժամանակին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական աշխատանքների բաժնի պետ,
ոստիկանության մայոր Ա. Մնացականյան

17.12.2018